

891.99v


U-28

2011-09

Բ-4 ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ՊԵՏԲ Ե ԶԱՆԱԳԵՆ ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

ԹՂԹԻ ՅԵՎ
ԱՐՃԻՃԻ
ՀԵՐՈՍՆԵՐ

ՆԿ. Տ.ԽԱՏԿԱՆՔՅԱՆԻ



891.895
Ա-28

ՊԵՏՏՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ
1933



Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Այս գիրքը տպված է Պետհրատի տպարանում,
Այնտեղ մեծ թվով բանվորներ են բանում:

Այնտեղ ապրում են շատ թերթեր ու զրգեր,
Նկարներ գույնգույն՝ տեսարաններ ու յերգեր:

Այնտեղ բանվորներ կան հարվածային, հերոս,
Վորոնեյ պեռք է գովենք մեր յերգերով:

Այդ բանվորները ավին ուժ ու լարում,
Հնգամյակը կատարեցին յերեք տարում:

ԱԶԱ ՆՐԱՆՔ

Հերոսները շատ են այս
տպարանում,
Ամեն մասում առանձին ու
ամեն բաժնում:
Ահա նրանց շարքը. գործով
հավասար,



ՄԱՐՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ,



ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԿԱՄՍԱՐ:



ԽԱՋԱՏԲՅԱՆ ԹՈՌՆԻԿ,



ՄԻՆԱՍՅԱՆ ՀԱՅԿ



ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՅՐԱՄ,



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ,



ԴԱՆԴՅԱՆ ԱՇՈՏ,



ՄԵԼԹՈՆՅԱՆ ՅԵՐԿԱՆԴ



ՓԱՌԼԻՋԱՆՅԱՆ ԱՐՏԱՆԱ,



ԼԱՆՏՅԱՆ ԱՐՄԻՐԱԶ



ՀՈՎՍԵՓՅԱՆ ՍՈՒՐԵՆ,



ՂՈՒԿԱՄՅԱՆ ԶՎԱՐԺ

Հարվածալին հերոս դեռ
բանվորները շատ

Նրանց հետ և մեկտեղ իր հասակովն ապելի
Աշխատանքի հերոս:



ԿՈՂԱԲԱՇՅԱՆ ԱՎԵՏԻՔ

Նրանք տանում են առաջ հնգամյակի զրոշը
Նրանց շարքումն և ահա վարպետ



ՖՐԱՆՑ ԲՈՈՂԵ:

ԻՍԿ ՌՎ Ե ՆԱ

Հիսուն տարեկան դարձավ
Նա այս տարի,
Նույն լիսանդով դարձավ
Յերած պալատի:

Ծնվել և Գերմանիայի
Քլոնդրուրդ քաղաքում,
Մի որ գարնանային —
Նա մտավ կյանքում:

Հալը՝ դարբին և լեզի,
Բանվոր հասարակ,
Լինքը փոքրիկ լեզի
Աճել և արագ:

Հազիվ վեցը տարեկան
Դպրոց մտավ նա,
Բալց չը մնաց լեզիար,
Ուրիշ ճամբով գնաց:

Չանցած ութը տարի դեռ,
Դպրոցից գնաց,
Դուռն էր ծեծում կարիքը,
Պետք էր տպրուստ ու հաց:

Յերը լրացել էր նրա
14 տարին,
Նա ընդունվեց տպարան,
Մտավ պալատի:

Վարպետի հաց ճարեր,
Ընտանիքին պաշար՝
Տառեր, տառեր շարեց,
Դարձավ զրաշար:





Պ Ա Տ Ե Մ Ա Ջ Մ Ը

Մագեց համաշխարհային պատերազմը
մեծ,

Աշխարհի բուրժուականները իրար դեմ
յեղան.

Նրանք յեղան — բանվորների արյունը
խմեն,

Նրանք իրար ձեռից յերկրներ առան:

Կոտորում ելին բանվորին, գյուղացուն,
Նրանց գերի ելին քշում հեռու:

Ընկնում ելին վերավոր, աչքերին
արցունք,

Արնոտ հրացար նրանց ձեռում:

*

Բոռլը արդեն հասակավոր ծարդ եր,
Բանում եր ուսական Թիգա քաղա-
քում.



Դրութիւնը նրա գծվար ու բարդ եր—
Դերմանացիներին գերի ելին հաժա-
քում:

Հաժաքում ելին ու Սիրիբ քշում,
Քշում յերկրի ծալքերը հեռու,
Այնտեղ գծվարին որեր ելին քաշում,
Տանջվում ելին բուրբ, շատերը՝
մեռնում:

Նրանց քշում ելին վորպես թշնամի
Դերմանական յերկրի քաղաքացիներ.
Ուզում ելին նրանց սրբելմանդամից,
Ուզում ելին թշնամուն ալդպես վա-
խեցնել:





ԱՔՍՈՐ

Ֆրանց Բոռլը, Ֆրանց Բոռլը,
Ուր քշեցին նրան, գիտե՞ք,
Անցավ դաշտեր, անցավ ձորեր,
Անցավ սարեր, անցավ գետեր:

Ֆրանց Բոռլը, Ֆրանց Բոռլը,
Տանջվում է նա ցարի ձեռին,
Դրուժյունը անորոշ է,
Յերեկ բանվոր, այսօր գերի:

Ցարի լերկիր - մահ, կախաղան,
Սով, ցուրտ ձմեռ, բորան ու բուժ
Նրան քշում են Սամարղանդ,
Նրան քշում են Ուրենբուրգ:

Վոտքերով՝ իր բանվորական,
Նա անցնում է վերստեր հարցու
Շուրջը՝ ցարի դուրքը ազան,
Շուրջը՝ կռիվ, մահ ու արյուն:

Ֆրանց Բոռլը, Ֆրանց Բոռլը,
Ուր քշեցին նրան, գիտե՞ք.
Անցավ դաշտեր, անցավ ձորեր,
Անցավ սարեր, անցավ գետեր:

ՀՈԿՏԵՍԲԵՐԸ

Այսպես անցավ մի քանի տարի,
Սովի, տանջանքի, գերութան, մահի,
Բանվորները լերան վերջին պաշարի,
Արյունոտ ցարին տապալեցին գահից:

Տապալեցին պետությունը բանակար,
Բուրժուաների, վաշխատույցի, տերտերի.
Բարձրանում էր հոկտեմբերի գրոշակը -
Քաղաքներին, պարտաներին, բերդերին:

Սակաչն կռվում, քանդում ելին, մահ բերում:
Սպիտակ բանակները խումբ-խումբ,
Քաղաքներ ու գյուղեր ելին ավերում,
Բանվորներին բռնում ելին ու կախում:

Ուղում ելին նրանք հիմքից կործանել
Հոկտեմբերյան հեղափոխությունը մեծ,
Յերկրումը ավեր, լերկրումը մահ ցանել
Յեւ մեր արյունը ուղում ելին խմել:

Հոկտեմբերի գրոշակը միշտ վառ է.
Ու՞ր կարող էր թաղել հեղափոխությունը,
ԶԷ՝ Վոր ԼԵՆԻՆՆ ԵՐ ՆՐԱ ՂԵԿԱՎԱՐԸ
ՅԵՎ ԲՈՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ



ԱՌԱՋԻՆ ՀՐԱՄԱՆԸ

Դուք հարցնում եք Ֆրանց Բոոշը ո՞ւր է, Գուցե նա յեւ կռիւներին զոհ գնաց:

Գուցե նրան եւ կախեց զորքը սպիտակ,
Գուցե նա յեւ տանջանքով իր մահը գտավ:

Վնչ. նա քաշ եր տալիս իր կյանքը թաքուն,
Բաշկիրիայի Տեմյասովա քաղաքում:

Բաշկիրիայում եւ մեծ կռիւներ յեղան,
Այնտեղ եւ անպակաս եր մահ ու կախաղան:

Կախաղան եր սարքում զորքը սպիտակ,
Սպանում եր ու կախում փողոցներում, պատի տակ:

Կախում եր ով ոտար, ով գերի լեր ու բանվոր,
Ով չքավոր գյուղացի, ով վոր կարմիր զինվոր:

Բոոշն ազատվեց կախվելուց, նա ազատվեց մահից,
Յեւ իր կյանքը այսպես հաղիվ մի կերպ պահեց:

Հոկտեմբերը յերբ հաղթեց Բաշկիրիայում նույնպես,
Յեւ իր Բոոշը սիրտ առած և տպարան շտապեց:

Չէ վոր նա հին բանվոր եր, չէ վոր գրաշար եր
Յեւ հաղթության առաջին հրամանը նա շարեց:

Նա շարեց հրաման—

**ՍԵՐ ՂԵԿԱՎԱՐԸ ԼԵՆԻՆՆ Ե,
ԱՍԲՈՂՋ ԻԾԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆՆ Ե:**

**ԳՈՐԾԱՐԱՆԸ՝ ԲԱՆՎՈՐԻՆ,
ՀՈՂԸ՝ ԳՅՈՒՂԱՑՈՒՆՆ Ե.—**

Յեւ իր կարմիր Բաշկիրիան՝ Հոկտեմբերին փողջանեց:

ԴԵՊԻ ԳԵՐՄԱՆԻԱ

Ֆրանց Բոոշն այսպես բաշկիրներին ոգնեց
Մինչև հազար իննը հարյուր քսան թվականը.
Նրանց համար կազանից մեքենաներ գնեց
Յեւ կարգավորեց նրանց տպարանը:

Հետո վերադարձավ Գերմանիա կրկին,
Բերլին քաղաքն իրեն այնքան ծանոթ.
Բայց նրա պատմությունը հետաքրքիր—
Չը կարծեք թե վերջանում է այսքանով:

ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Գերմանիան բուրժուական յերկիր է,
Այնտեղ իշխում է կապիտալիստը,
Գործարանի տերն ու բանկիրը
Յեւ սրանց ծառա սոցիալ-ֆաշիստը:

Բանվորներին շարտում են փողոցը,
Յերեխաները սովից մեռնում են,
Հազարավոր մարդիկ անզոր են
Հենց մայրաքաղաք Բերլինումը:

Սակայն կռիվ են մղում անդու,
Բանվորները հաղթության հույսով վառ.
Կոմկուսը նրանց առաջնորդում
Յեւ թեյմացն եր նրանց ղեկավար,
Կոմկուսն առաջնորդում է նրանց
Բանակը, վոր մեծ ու անքանակ է,
Լ.ԵՅԻՍԵ Ե նրանց գրոշներ զրա,
Նրանց է կառմիր հաղթանակը:





ԴԵՊԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Վորպես վարպետ, իրա գործին հմուտ,
Փրանց Բողն աշխատում եր Բերլինում:

Նա շարում եր մեքենայի վրա,
Նա շարում եր և անսխալ և արագ:

Այսպես աշխատեց հինգ տարի, թե վեց,
Ապա Բերլինին հրաժեշտ տվեց:

Հենց Բերլինից նա դնացք հասած—
Ուղիղ լեկավ Սորհրդային Հայաստան:

Յեկավ մեզ ոգնելու, վորպես մասնագետ,
Վորպես մեզ մոտիկ, վորպես մեզ ընկեր:

Նրա հետ լեկան նոր մեքենաները,
Վաղժունեցին նրանց մեք բանվորները:

Այն վոր շարում ելին ձեռքով հասարակ—
Պետք եր շարեցին լինոտիպով արագ:

Բողն աշխատում և արգեն նվիրված և անգույ,
Նա աշխատում և այսպես, անհանգիստ ու լեռանդուն:

Հաճախ մինչև մութ գիշերը լինի կես,
Մեքենաների մոտ նա հսկում և գետ:

Նա հսկում և աշխատանքի վորակին,
Նա հսկում և պլաններին, քանակին:

Նոր ստացված լինոտիպի վրա բարդ,
Նա վարժեցրեց քանի, քանի գրաշար:

Այն վոր շարում ելին ձեռքով հասարակ—
Շատել սկսեցին լինոտիպով արագ:

ՆԱ ՀԵՐՈՍ Ե

Փրանց Բողն լեկած լերկրից ոտար՝
Մեծ լեռանդով լծվել և հնգամյակին,
Տպարանում նա մեծ հարգանք դտավ,
Յեկ իր գործով ոգուտ ըերեց ահագին:

Նա հերոս և, հարվածվին հերոս,
Ամբողջ ուժով հնգամյակին նվիրված,
Կատարել և բո լեկելյան տեմպերով—
Աշխատանքը իր ուսերին դրված:

ՎԵՐՋԻՆ ԽՈՍԲ

Վորպեսզի ճանաչեք, փոքրիկ ընկերներ
Հնգամյակի հերոսներին հարազատ,—
Այս գիրքը հատկապես ձեզ համար գրեց
Ձեր բանաստեղծ ընկեր



ԱԼԱԶԱՆԸ



ԳԻՆԸ՝ 75 ԿՈՊ.



ԱԼԱԶԱՆ
ԴԵՐՈՒ ԲՈՒՄԱԳԻ Ի ՏՎԻՆՈՒ
ԴԻԶ ՏՏՐ Արմենի ԶՐԻՎԱՆԻ

ՀՀ Ազգային գրադարան



NL0395559

6299